INTERNATIONAL MONETARY FUND
EXTERNAL RELATIONS DEPARTMENT

Մամլո հաղորդագրություն թիվ. 09/360
Անմիջական հրապարակման համար
12 հոկտեմբերի, 2009թ.

Արժույթի միջազգային հիմնադրամ
Վաշինգտոն, Կ.Շ. 20431 ԱՄՆ

Հայաստան կատարած այցի վերջում ԱՄՀ գործադիր տնօրենների հայտարարությունը

Ս.թ. հոկտեմբերի 12-ին Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր տնօրենների պատվիրակությունը, որի կազմում էին տկն. Մեգ Լանդսեգերը, պարոնայք Ախե Բաքերը, Ամբրուազ Ֆայոլը, ՀԻ Ձանշյոնգը, Թոմաս Մոզերը և Կլաուս Դ. Շտայնը Հայաստան կատարած այցի վերջում Երևանում արել է հետևյալ հայտարարությունը.

«Մենք երախտապարտ ենք երկիր այցելելու հնարավորության և շնորհակալ ենք Հայաստանի ժողովրդին, նախագահ Սերժ Սարգսյանին, վարչապետ Տիգրան Սարգսյանին, կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանին, ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանին և էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին իրենց ջերմ հյուրընկալության և արդյունավետ քննարկումների համար: Մեր այցը մեզ շահագրգիռ կողմերի լայն շրջանակի, այդ թվում՝ պետական և մասնավոր հատվածների ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության և զարգացման գծով գործընկերների հետ քննարկումներ անցկացնելու եզակի հնարավորություն է ընձեռել:

«Համաշխարհային ճգնաժամը ծանր հարված է հասցրել Հայաստանին. ակնկալվում է, որ 2009 թվականին իրական ՀՆԱ-ն կնվազի շուրջ 15 տոկոսով: Նվազել են արտաքին ներհոսքերը և հարկային եկամուտները՝ թուլացնելով վճարային հաշվեկշիռը և պետական ֆինանսները: Այս զարգացումները լրացուցիչ դժվարություններ են ստեղծել Հայաստանի բնակչության համար:

«Մենք գովեստի խոսք են ուղղում իշխանություններին այս մարտահրավերներին արդյունավետ կերպով դիմագրավելու համար: Պահպանվում է հարկաբյուջետային ընդլայնողական քաղաքականությունը՝ հաշվի առնելով, որ ԱՄՀ-ի և մյուս դոնոր կազմակերպությունների օգնությամբ կառավարությանը հաջողվել է ծախսերը պահպանել 2009 թվականի սկզբնական բյուջեին մոտ

մակարդակում, միաժամանակ ավելացնելով առաջնահերթ ենթակառուցվածքային ծրագրերին ուղղվող ծախսերը:

«Ֆինանսական համակարգը շարունակում է կայուն լինել, և ս.թ. մարտի 3-ին վերադարձը լողացող փոխարժեքի հաջողություն է ունեցել: Կենտրոնական բանկը (ԿԲ) ընդլայնել է բանկային համակարգն իրացվելիությամբ ապահովելու իր գործիքները՝ մասնավոր հատվածի վարկավորումը խթանելու նպատակով: Միաժամանակ գնաճը համապատասխանում է իշխանությունների կողմից նպատակադրված 4±1.5 տոկոս ցուցանիշին:

«Հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների ուղղությամբ շարունակական առաջընթացը բեկումային կլինի կայուն պետական ֆինանսների և արդար և համաչափ հարկային բեռի ապահովման տեսանկյունից: Տնտեսության վերականգմանը զուգահեռ՝ միջնաժամկետ հարկաբյուջետային և պարտքի կայունությունը պահպանելու նպատակով կառավարությունը պետք է կրճատի հարկաբյուջետային պակասուրդը՝ միաժամանակ շարունակելով օժանդակել անհրաժեշտ պետական ծախսերին և ներդրումներին:

«Մենք ողջունում ենք տարածաշրջանային համագործակցության խոստումնալից նշանները, որոնք կնպաստեն տարածաշրջանի տնտեսական զարգացմանը: Մենք ԱՄՀ-ին օժանդակում ենք Հայաստանի իշխանությունների հետ գերազանց փոխհարաբերությունները շարունակելու գործում:»